ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Ջերմուկ, Մյասնիկյան 8, Հեռ. (0287) 2-12-17, 060-74-70-77,
Ֆաքս 0287-2-12-02, 060-74-70-77

21 մայիսի 2024 թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ Ս. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ս/թ մայիսի 20-ին Ջերմուկ համայնքի համայնքապետարան է դիմել Ջերմուկ քաղաքի բնակիչ Սոֆյա Սամսոնի Հակոբյանը՝ փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով՝ նշելով, որ իր՝ մարտական գործողությունների արդյունքում զոհված անձի ծնող լինելու կարգավիճակը հնարավորություն է տալիս ազատվելու փոխադրամիջոցի գույքահարկի վճարման պարտավորությունից:

ՀՀ Հարկային օրենսգիրքի 245-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 2-րդ և 3-րդ մասերի համաձայն, ինչպես նաև՝ Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 30-ի «Ջերմուկ համայնքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու կարգը սահմանելու մասին» N 47-Ն որոշմամբ փոխժադրամիջոցի գույքահարկից ազատվում են Արցախի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով զոհված, վիրավորված և ստացած վնասվածքներից հաջորդող տարիների ընթացքում մահացածների ընտանիքների անդամները: Նշված կարգի իմաստով ընտանիքի անդամ են հանդիսանում ամուսինը, ծնողը և զավակը (որդեգրողները և որդեգրվածները), ինչպես նաև քույրը և եղբայրը, եթե վերջիններս սույն կարգի 3-րդ կետի 1-ին կամ 3-րդ ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալու (հաստատման) օրվա դրությամբ փաստացի բնակվել են նույն հասցեում և ամուսնացած չեն եղել:

Սոֆյա Սամսոնի Հակոբյանը 44-օրյա պատերազմում զոհված Նարեկ Սուրենի Հակոբյանի մայրն է: Նարեկ Սուրենի Հակոբյանը ամուսնացած չի եղել և զոհվելու օրվա դրությամբ փաստացի բնակվել է ծնողների հետ՝ նույն հասցեում:

Սոֆյա Սամսոնի Հակոբյանի անվամբ գրանցված է Toyota Camry 2.5 մակնիշի 07 LL 977 պետհամարանիշով ավտոմեքենան: Դիմումով հայցվում է ազատել նշված փոխադրամիջոցի գույքահարկից: Դիմումը ենթակա է բավարարման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ